

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Հուլիսի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հուլիսի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում ցածր է եղել նորմայից 1-2 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 9-ին, 10-ին. Տավուշում գրանցվել է +30...+33^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +20...+22^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +33...+35^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +29...+31^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +22...+24^{0}C, Շիրակում՝ +20...+24^{0}C (Գյումրի՝ +26^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +20...+24^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +28...+30^{0}C, Գեղարքունիքում՝ +18...+22^{0}C, Լոռիում՝ +22...+24^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +33...+35^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +21...+24^{0}C, նախալեռներում՝ +27...+31^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 01-ին. Շիրակում գրանցվել է +6...+8^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +8...+10^{0}C (Հանքավան՝ +4^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +11...+13^{0}C, Տավուշում +12...+14^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +5...+7^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +12...+14^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +16...+19^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +9...+12^{0}C, Գեղարքունիքում՝ +5...+10^{0}C, Լոռիում՝ +5...+9^{0}C (Տաշիր՝ +3^{0}C), Արմավիրում, Արարատում՝ +13...+15^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +3...+8^{0}C, նախալեռներում՝ +11...+13^{0}C:



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 13-49մմ (77-295%), Լոռիում՝ 30-55մմ (131-99%), Տավուշում՝ 20-26մմ (111-140%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 19-23մմ (53-92%), նախալեռներում՝ 13-27մմ (159-176%), Գեղարքունիքում՝ 23-80մմ (92-455%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 17-22մմ (98-122%), նախալեռներում՝ 6մմ (65%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 10մմ (56%), նախալեռներում՝ 15մմ (259%), Արմավիրում՝ 2-17մմ (39-207%), Արարատում՝ 6-12մմ (158-218%), Սյունիքի հովտային շրջաններում՝ (Կապան 4մմ -36%), նախալեռներում՝ 4-11մմ (23-51%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են հուլիսի 01-03-ը և 05-08-ն ընկած ժամանակահատվածում. լեռնային շրջաններում՝ +6...+11^{0}C, առանձին լեռնային շրջաններում՝ +3...+5^{0}C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ +12....+17^{0}C:

Մշակաբույսերի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի խոնավության պաշարները բավարար են եղել, որոշ հովտային շրջաններում խոնավության պակասը լրացվել է հերթական վեգետացիոն ոռոգումով:



Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների



Ելնելով Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) պաշտոնական կայք էջում տեղադրված վեգետացիոն ցուցիչի քարտեզից՝ հուլիսի առաջին տասնօրյակում հանրապետությունում մշակաբույսերի աճն ու զարգացումն ընթացել է բազմամյա միջին ժամկետներում:

Շրջանների զգալի մասում վեգետացիոն ցուցիչը հասել է առավելագույն արժեքի:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Հացահատիկային մշակաբույսեր

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը, գարնանացան ցորենն ու գարին գտնվել են կաթնային, նախալեռնային շրջաններում՝ մոմային հասունացման փուլերում: Հովտային շրջաններում աշնանացան ցորենը լրիվ հասունացել է, կատարվել է բերքահանաք:

Նախալեռնային շրջաններում սկսվել է եգիպտացորենի կաթնային հասունացումը:

Պտղատուներ և խաղող

Լեռնային և նախալեռնային շրջաններում պտղատուների մոտ տեղի է ունենում շաքարային նյութերի կուտակում:

Հովտային շրջաններում շարունակվել է պտղատուների հասունացումը և բերքահավաքը:

Հովտային և նախալեռնային շրջաններում խաղողի վազի մոտ շարունակվել է ողկույզի ձևավորումը:

Կարտոֆիլ

Լեռնային շրջաններում կարտոֆիլը գտնվել է ծաղկման փուլում, նախալեռնային շրջաններում ծաղկումն ավարտվել է: Կարտոֆիլի մոտ տեղի է ունենում պալարագոյացում: Եղանակային պայմանները նպաստավոր են եղել պալարագոյացման համար:

Հովտային շրջաններում դիտվել է վերգետնյա մասի թառամում:

Կարտոֆիլի դրության գնահատականը լավ է:

Բանջարանոցային մշակաբույսեր

Հովտային շրջաններում սկսվել է բանջարանոցային մշակաբույսերի հասունացումը:

Լեռնային շրջաններում շարունակվել է կաղամբի միջահաս տեսակի գլխի ձևավորումը, բանջարանոցային մշակաբույսերը ծաղկել են:

Բանջարանոցային մշակաբույսերի դրության գնահատականը լավ է: